



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 49


ՀԱՐԱՐ

4 ՕԳՈՍՏՈՍ 1907

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ



Ջ Ե Ն Ի Թ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոստիլի դիտարանին. 1903
ԱՐՏԱՔՈՅ ՄՐՑՄԱՆ. — Անդամ ժիւղի. Միլան. 1906

ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԹՈՒՐԻՈՅ ՀԱՄԱՐ:

Գ. ՄԱՐԳԻՍՏՅ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու և շքեղ-
ներու եւ գոհարեղէներու

ԹԻԻ 16 = ՊԱՀԷ-ԳԱՐՈՒ = ԹԻԻ 16

Օռոգտի-Պաք հաստատութեան դիմացը:

Ի Բերա, Կ'գանուի գոհարավաճառ Տ. Տ. ԷՄԷԼԻՃԵԱՆ ԵՂԲԱՐՑ քով,

Թիւ 400 Մեծ-փողոց.


Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

(آ. آصاڤوريان) شرکت مرتبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշլը-Ալի ճառասկի քիւ 52

Հատոր 40 փարսա



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
լիմանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործութեամբ, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՎԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|--------|--|
| ԹԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| ԿԱԼԱԹԱ | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| ԿԱԼԱԹԱ | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| ՍԿԻՍԱՐ | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երախաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւզօղլուի տունը:

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» 54 »	»	27 »
Արսասահման	» 12 Ֆր.	»	6 Ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՊԱՅՄԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասցեի Ասատուեան տպարանի թիւ 52.

Գաւառներու մէջ գործաշաղկներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան և թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտարութեով և կամ բոսթայի փոստով 20 հատը 20 ղրուչի հաշուով:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 49

ՇԱՐԱԹ

4 ՕԳՈՍՏՈՍ 1907

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ԶԱԶԱԻՆ

Կարելի է միթե կարդալ ու չի յուզուիլ այնքան զգայուն, այնքան իրական փաստերով գրուած յօդուած մը՝ Զուկին հոգեւարէին ի պատասխան։ Հոն գեղեցիկ սեռէն, զգայուն սրտի մը ճշմարիտ բողոքը կայ, օրուան երիտասարդներուն հանդէպ ձկնորսին կարթէն աւելի երիտասարդներուն կարթերու զոհերն են որք կը յուզեն Զազան, ու երեւակայութեանս առջեւ կը պատկերացնէ, սիրոյ զոհը եղած հոգեւարք աղջկան մը մահուան անկողինը, որուն դառն մանրամասնութիւնները մօտէն գիտէի, ու իբրեւ մըտերիմ՝ մինչեւ անոր վերջին շունչին հետեւած էի։

Ի՜նչ անուշի խորհուրդ մը կար խեղճ աղջկան մարելու մօտ աչքերուն մէջ, անոր հիւժած կուրծքին տակ տառապանքը կեւեւէջէր, գունատ չրթներէն երբէք բողոք մը չի լսեցի, վարդ մըն էր չքնաղ, որ անխիղճ

ձեռք մը իր հաճոյքին համար անոր թերթերով՝ ամպրիւմ-մեռնիմը խաղաց։

Քանի մը ամիսներ տուեցին այս վիճակը, ու Օգոստոսի տաք ու ծանր օր մը, քանի մը բարեկամներ անոր դադաղին ծոպերը բռնած դէպի գերեզման կերթայինք, ամէն-նուառ աչքերը արցունք, ու սիրտերնիս վէրք, և մտածել թէ՛ նոյն իսկ այդ պահուն անգութ զոհողը, Բերայի մեծ փողոցին վրայ կառքի մը մէջ երկնցած՝ իւր գուարճութիւններուն կը հետեւէր։ Սոսկայի հանելուկ, ոչ իսկ արցունք մը՝ տապալած սրտի մը փոխարէն։ Բարոյական մարդասպաններն են առնք, որ ամէն տեղ կան, որոնց սէրը՝ դաշոյն մըն է և գրեթէ ամէն վայրկեան կըսպառնայ մեր խեղճ քոյրերուն գլխուն...

Խեղճ բայց ոչ բողոքովին անմեղ. մայր մը կարգիլէ իւր դերահաս տղուն ծովեզրին մօտենալ, որպէս զի վտանգի մը զոհը չըլ-

յայ: Անասուններ կան որոնք երբ բոցը տեսնան կը փախին անկէ: Թռչունները, երբ կապոյտ երկինքին վրայ սեւ սեւ ամպերու կուտան կուժը կը նշմարեն՝ կը սարսափին ու տարօքինակ իրարանցումով մը ապաստանարան մը կը փնտռեն՝ վտանգէն խոյս տալու համար: Բայց մեր խեղճ աղջիկները, ալքոյամոռներու նման, որ գաւաթ մը ճերմակ ջուրի համար ամէն ինչ կը զոհեն, երբ սիրոյ գրաւիչ խոստումը կառնեն, կը վանեն իրենց տեսութեան սիրոյ զոհերով լեցուն գերեզմաններ, ու լոկ ֆլորքի մը և կամ սիրած ու սիրուած ըլլալու գաղափարով՝ կը նետուին այդ հմայիչ վտանգին բազուկներուն մէջ:

Քանի՜ քանի՜ անգամներ դիտած եմ 15-16 տարեկան նորահաս աղջիկներ, որ դեռ հագիւ գաղափար մը կազմած կրնան ըլլալ կեանքին առերեւոյթ իրողութիւններուն վրայ: Եւ սակայն մեղամախճոտ ժպիտ մը կայ անոնց ճակտին վրայ, ու դատարկ նայուածք մը աչքերնուն մէջ, փոքր սիրահարներ են անոնք, ապագայ ցաւը իրենց ծնողքին ու ընկերութեան: Ու երբ օր մը անոնցմէ մէկը կարծիք մը կը յայտնէր՝ ըսաւ. «Ինչո՞ւ կըսպասենք որ մէկ հոգիի վրայ կեդրոնացունենք մօր սէրը, սիրտը լայն է, պէտք է սիրենք այնչափ՝ որ կրնանք»: Ահա գաղափար մը որ մեր կանացի սրտին մէջ օրէ օր իւր հիմը կը դնէ, միջոցով մը՝ աղտոտ բարքերու, որ արագօրէն կը տարածուի, մեր երբեմնի այնքան անմեղ ու միամիտ ճանցուած կիներուն երակներուն մէջ:

Տասնըվեց տարեկան աղջիկ մը և թերեւս ալ տասնընոթս, կարդացած և իւրացուցած է արդի վէպերը, սիրտը, միտքը ու երեւակայութիւնը սէր կը հռովեն, և ինչպէս սէր. Wertherին La Dame aux Caméliasին Irreparableին սիրոյ տրամները և ոչ թէ անոնց հոգեբանութիւնը:

Կան որ երիտասարդներ կերեւակային որ իրենց զոհը ըլլան՝ ինչպէս Վերթեր՝ Շարլօթին: Կան ուրիշներ ալ որ Մարկեթին պէս թուքախտաւոր ըլլալու մէջ հաճոյք մը կը զգան, ու հիւանդ ըլլալ կերպէն «Ֆիզիքական հիւանդութիւնները մարդուս գութը կը շարժեն, իսկ բարոյական հիւանդութիւնները զազրոյթ կազդեն» ըսած է մեծ գրող մը:

Ուրեմն որքան ցաւալի է տեսնել մեր աղջիկներուն այս բարոյական անկումը, որուն պատճառը՝ սինալ է ուղղակի երիտասարդութեան վերագրել, ինչպէս կըսէ յարգելին Զազա: Առէք մեր աղջիկներուն ձեռքէն Վերթերը, առէք Լա Կամիլիան, և ինչպէս Եղիան ըսած է ու շատեր կը կրկենեն. աւելը տուէք անոնց ձեռքը, բռնաբխան կապեցէք անոնց մէջքին, թող անոնց միտքը միշտ զբաղուի մը ունենայ նիւթական, և այն ատեն երիտասարդներուն կարթը պարտաւր պիտի ելլէ. հիւանդ գաստիարակութիւնն է որ կը կործանէ ձեր սէրը օրիորդ:

Խնայեցէք կ'ըսէք, կարելի՞ է հակառակը ընել, բայց փոխարէն նախ դուք ձեռք խնայեցէք, և այսպէսով՝ հաւատացէք քանի՜ քանի՜ երիտասարդներու խնայած պիտի ըլլաք:

Երիտասարդը կարթը կը նետէ, իսկ կինը՝ թակարթը կը լարէ, վա՛յ անոր որ այդ թակարթին մէջը կիսնայ անգամ մը ...:

Կարթին մահը անմիջական է, իսկ թակարթինը տեւողական:

Գեղեցիկ սեռէն նուրբ հիւսկէնով չքնաղ օրիորդ մը չի կրնար երկար դիմանալ՝ բաժանման և լքուած ըլլալու վիշտին, ու կարճատեւ տառապանքէ մը յետոյ կ'երթայ ծաղկեփունջի մը տակ պառկել, իսկ այն կորովի երիտասարդը՝ որ կնոջ թակարթին մէջ ինկած է անգամ մը, քմահաճոյքը կ'ըլլայ անոր, օր մը կը սիրուի, ուրիշ օր մը կ'ատուի, ինչ մահ է այս շարունակական, ինչ հոգեւարք է անվերջանալի: Երեկուան աշխոյժ երիտասարդը, այսօր գլխիկոր պատի մը տակէն մտածկոտ քայլերով կանցնի գիշեր ու ցորեկ՝ իւր սիրուհիին դռանը առջեւէն, լոյսը կը դիտէ անոր պատուհանէն ներս և սոսկալի նախազգացումը կ'ունենայ թէ միեւնոյն պահուն իսկ իւր պաշտած բազուկներուն մէջ ուրիշ մը կը գտնուի:

Հարցուցէք կնոջ մը թէ ինչ հոգեբանութիւն կայ երիտասարդները նախանձով մաշեցնելուն մէջ, Վրէժիւն ԴՐՈՒԹԻՒՆ պիտի ըսէ ... Բայց վա՛տ վրէժխնդրութիւն:

ԷՏՄՕՆ ՍԷՖԵՐ

ԷՋ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ



Ոչ նորավէպ է այս, ոչ ֆանթազի մը և ոչ ալ խօսուողաւոր: Տապալանագի՛ր մը...

Սիրուած էակի մը յիշատակը յաւէրժացնելու համար գրուած տողեր, մարմարիոնի տեղ թուղթ և կեղծ արցունքներու փոխան աննենգ յարգանք մը քու յիշատակիդ, ո՛վ իմ անուշիկ Փարիսըս, ո՛վ դու, մաքրագոյնդ ի կանայս:

Կոյս մնար դուն և այնքան ապրեցար որքան կ'ապրին ... կաղնիները: Ութսուն տարի ...:

Սիրեցինք զիրար ճշմարիտ, անխաղախ, անապակ սիրով, իրարու վրայ գուրգուրացինք երեք տարի շարունակ, մէկ տանիքի տակ, մէկ թելի վրայ, քով քովի: Մէմլամպար կը լուսաւորէր զմեզ, մէկ գաւաթէ կը խմէինք և մէկ աթոռի վրայ կը նստէինք... երկու հատ չունենալուս համար:

Թող տուր ուրեմն ինծի, իմ սիրական տիրուհիս, որ իմ պիղծ մասներովս մատչիմ քու կուսագեղ յիշատակիդ և այս լիկումին համար ներողութիւն հայցէ ինծի երկինքէն ուր, վախճամ, դեռ կ'ապրիս ...

Տիկին Փարիս ... ո՛վ է ադ, — կը հարցընէք ինծի, — որուն վրայ այնքան յարգանք, այնքան երկիւղածութեամբ կը խօսիմ: Այս անունը բնաւ բան մը չըսեր ձեզի և երբէք չէք կրնար երեւակայել թէ մոռացումի անդունդէն դուրս քաշուած այդ արարածը իր պատմութիւնը ունի:

* * *

Եթէ Contemporainsներուն մէջ այդ անունը տեղ չունի յանցանքը Vapereauինն է, որովհետեւ Տիկ. Փարիս ալ բեղմնաւոր կեանք մը ունեցած է, — բեղմնաւոր բառին աննիւթական, պարկեշտ իմաստով — և գործ մը կատարած է որուն նմանը ոչ ոքի տրուած էր ընել ասկէ առաջ, ինչպէս նաև ասկէ ետքը:

Սողոմոն՝ որ շատ կնասէր ըլլալուն համար իմաստուն կոչուեցաւ, Սողոմոն անուանի է որովհետեւ տաճար մը շինելէ ետքը, գուցէ անկէ ալ առաջ, կիներու հետ կիյնար կ'ելլար պղղպատէ ... կամքով մը. Բօլոմ-

պոս նշանաւոր է որովհետեւ Ամերիկան գըտաւ, Քանպրոն բառ մը արտասանած ըլլալուն համար որ ապահովապէս foin coupé չէր բուրեր. Հիւմպէրները՝ իրենց... փափկանըկատումներուն համար. Նինօն տը Լանքլէօ՝ որովհետեւ ո՛չ սիրուելէ կը յոգնէր և ո՛չ սիրելէ կը յագեցնար, ինչպէս նաև Լիան տը Բուժի՝ տէրը ըլլալուն համար անկողնի մը որ հազար ֆրանք կ'արժէ ... ժամը:

Տիկ. Փարիս ասոնցմէ վար չէր մնար: Ան ալ իր կարգին բան մը ըրած էր որուն արձագանգը պէտք է խնամով պահուած մնայ չնաշխարհիկ մարդոց պատմութեան մէջ:

Տիկ. Փարիս, բնական տանս տանտիրուհին, խախմաճի Իսկէնտէր աղային քոյրը, Բուլանթի տուտուին դրացին, որ Գուրգէնին ծնիլը տեսած է և ձանիկ ամիրային մեռնիլը, Տիկ. Փարիս որ Պէզճեան. ամիրային ձեռքը պագած է և ոտքերը Գէորգ Կաթողիկոսին... որպէս զի իր եղբայրը, Իսկէնտէրը, վարդապետ չընէ, այդ Տիկ. Փարիսը վիթխարի, դիւցազնական, ահագին, սարսուցեցողիչ, անիմանալի բան մը ըրած է: Գիտէ՞ք ինչ...:

Տասներկու տարեկանէն սկսեալ մինչեւ ութսուն տարեկան հասակը, այսինքն վաթսունըութը տարուան չըջանի մը մէջ 744,600 խօլա ջուր քաշած է հորէն, Տիտանի գործ մը որ կրնար կասպից ծովը չորցնել:

Հակառակ, սաղայն, այսքան ջուրին՝ չոփ-չոր կին մըն էր Տիկ. Փարիս, երբ ամուրիութիւնս գացի պարտըկել իր տանը մէջ, իբրեւ pensionnaire, երեք տարի շարունակ:

Ուրկէ՞ ուր հոն ինկած էի. ամբողջ պատմութիւն մըն է այս զոր մանրամասնօրէն չի կրնալ պատմելուս համար անշուշտ պատճառներ ունենալու եմ:

Cherchez la femme! այս առածը իր ճշմարտութենէն բան մը չի կորսնցնէր, որովհետեւ ախրացուներու բերնէն ալ դուրս կուգայ:

Թողուլ Բերան, իր ճոխ արարթմանները, վարձուկահաւորուած սենեակները — ուր ստէպ տանտիրուհին մոռցնել կուտայ ամուրիութիւնդ — և ինչպէս այնպիսի տան մը մէջ որու վրայէն աղքատութիւն, խեղճութիւն կը կայլակէր, փողոցի մը մէջ ուր ոչինչ կար

յանձնարարելի, այնպիսի զրացիներու քթին տակը որոնց բարեւ տալու կը քաշուի մարդ, այս ամէն պզտիկութիւնները, տգեղութիւնները յանձն առած էի որովհետեւ բարեկամուհի մը այսպէս ուզած էր. et lorsque femme veut! ...

Տարբեր կերպով չէի կրնար շարժիլ, ուստի անձնուրաց համակերպութեամբ մը թէեւ մտայ այդ տունէն ներս, բայց, աւա՛ղ, երբ երեք տարի ետքը հարկ եղաւ ինծի դուրս ելլել, անկէ, արցունք մը կար աչքիս մէջ և ցաւ մը սրտիս խորը: Մօրենական տանիքէ բաժնուելու պէս դառն եղաւ մեկնումս և հակառակ անկէ ի վեր այնքան տարիներ անցնելուն, մի՛շտ, նոյն իսկ այսօր, այս պահուս, երախտագէտ թափով մը զգացումներս կ'ողողեն հոգիս՝ երբ միտքս կուգայ այդ շարժուն մոմիան, Տիկ. Փարիս, որ իր ամէն առաքինութիւններէն զատ, անհաւատալի քաջութիւնը ունեցած է ութսուն տարի շարունակ անվթար պահպանելու իր նարնջենոյ ծաղիկը՝ հակառակ ամէն փորձութիւններու, ամէն մարմնական մոլորումներու:

Եւ գեղին մէջ կ'ըսէին թէ տանտիրուհիս բաւական դեղեցիկ եղած էր ...

Անշուշտ երկնից Prix Montyonին արժանացնելու համար չէ որ réclamer կ'ընեմ այսօր Տիկ. Փարիսի այն առաքինութեան՝ զոր երկու անգամ քառսուն տարիներու երկայն շրջանի մը մէջ անձեռնմխելի կրցած է պահել:

Երբ ճանչցայ զինքը, ժամանակը իր աւերիչ դերը կատարած էր արդէն: Գլխուն վրայ մազ չէր մնացած ո՛չ ալ բերնին մէջ ակռայ:

Չոր ու վտիտ մարմին մը որ երկար տեն սնտուկի մը տակը մոռցուած ճերմակեղէնի գոյնը առած էր, մզլոտած խաւարի գոյն աչքեր, և բերան մը որ կարծես մաշած էր շատ խօսելէ. աւասիկ inventaire իր ֆիզիքականին:

Բայց ասոր հետ մէկտեղ թեթեւոգի, ուստոստուն, զուարթաբան և խելքը գլուխը:

Իր կեանքը նպատակ մը ունեցած էր: Մաքուր ըլլալ: Մաքրութիւնը մարմնական թէ անային, իր իտէալն էր, idée fixe, պաշտամունքը:

Պիտի զարմանաք եթէ ձեզի ըսեմ թէ, Տիկ. Փարիս ամէնէն շատ լուացուած կինը եղած է Հայերուն: Սագի մը պէս կը սիրէր ջուրը և լողանքը՝ բարիզեան de haute volée քօքօթի մը նման:

Լուր օրերը առտուն կանուխ պանեօ մը կ'առնէր, ձմեռը գաղջ և ամառը պաղ, սանկ թեթեւ պանեօ մը, bain de siége մը թերեւս — տեսնելու հետաքրքրութիւնը չեմ ունեցած — և շարաթ, կէս օրէն ետքը, անպատճառ մեծ հանդիսաւոր բաղնիք մը որու միջոցին կէս խալիպ օճառ կը սպառէր. իր ամէնէն մեծ ծախսն էր այս:

Շատ աղուոր հոտող կիներ ճանչցած եմ ես, բայց Փարիսի պէս հատ մը չեմ տեսած որ բնաւ բան մը չի հոտի:

Խնդութեան աստիճան հասնող իր մաքրասիրութիւնը մարմնէն անմիջապէս ետքը կը տարածուէր տանը մէջ գտնուող կենդանի և անշունչ էակներու վրայ անխտիր. կը լուար ամէն օր, խոհանոցը, բակը, սանդուղները, հաւերը, կատուն, կը օրքէր աթուռները — ըսելու եղանակ մըն է այս — ամբողջ տնական ամանները, կը չփէր դռներու պղնձէ ցնցուղիները, կը մաքրէր ապակիները, դարակները, պահարանները և տանը բոլոր ծակը ծուկը: Եւ ասիկայ, Աստուծոյ օրը, ութսուն տարի շարունակ:

Հիմայ որ մեռած է, այլեւս կրնամ ըսել: Տիկ. Փարիս երեք չորս անգամ տաք ջուրով լուացած է զիս և անգամ մըն ալ խօսքով ... տունէն գիշեր մը բացակայ գտնուելուս առաջին անգամը:

Աստուած ողորմի՛ հոգուն, զիս մօր պէս կը սիրէր, անկէց ալ աւելի: Թէեւ կարասիներու և զարդարանքի տեսակէտով շատ խեղճուկ ըլլար ննջասենեակս, բայց հոն տիրող մաքրութիւնը շատեր չեն ունեցած իրենց տուններուն մէջ:

Իր մաքրասիրութեան աստիճանը նկարագրելու համար՝ Հանրագիտական 16 էջերը քիչ պիտի գային, ուստի մէկ օրինակով ներեցէք որ բաւականանամ:

Տիկ. Փարիս այնքան մաքրասէր, այնքան մաքրասէր էր որ աղտոտ բառ մը արտասանելուն պէս՝ կերթար անմիջապէս բերանը կը ցողուէր, ա՛լ երեւակայեցէք:

Այդ ոչխարի, տատրակի, սագի տիպար կինը տկարութիւն մը ունէր միայն, տարիքի խօսք ընելու չէր հետը: Կրակ կը կտրէր, կարծ, վիշապ:

Յիսուներեք տարեկանէն վեր չէր ելլեր, խարիսխ նետած էր հոն: Ութսուն տարի ապրէ է ետքը, յիսուներեք տարու մեռաւ:

Այս մանրամասնութիւններուն որքան վաւերական ըլլալը գիւղացիները թող ըսեն ձեզի:

Իմ ալ զրօսանքս էր տարիքի խօսք ընել չարունակ իրեն հետ:

— Բա՛ փա՛րիս, Պօղոս Պատրիարքը տեսած ես:

— Սանկ հեյալ մեյալ միտքս կուգայ: Ագապիին հետ օր մը ժամ կացեր էինք տէ, մեզի ցուցուցին: Զօճուխներ էինք, ինչ միտքս մնայ:

Եւ ըսել թէ Պօղոս Պատրիարքը շատ շատ 40 տարուան խնդիր մըն է:

Դիշեր մը Աւետիս Պատուելիին մէկ գիրքը կը կարդայի կոր, ժամանակագրութիւն մը կամ ասոր մօտ բան մը: Կերեւայ թէ 1838ին Օրթագիւղի մէջ սեւ Մարիամ սնուն հայ կին մը իր երկու աղջիկ զաւակները հորը նետած խեղդած է եղեր, գոնէ այսպէս կ'ըսէր Աւետիս Պատուելին:

— Բա՛ փարիս, վախքին սեւ Մարիամ մը կայ եղբր քի երկու աղջիկները հորը նետեր է նէ, միտքդ է:

— Բա՛ վույ, ինչ կործանում օր էր քի, աչքովս տեսայ, Ագապիին հետ սեյիքի գացինք նէ:

— Էյ, քանի տարի կ'ըլլայ կոր:

— Էյ, սանկ քսան տարի մը կայ:

— Հիմայ պունցի իօսէ. քա, ատ պանը ասկէ քամամ 61 տարի առաջ եղած է, դուն ալ ան ստենը հիչ սեյիլ իսէ, 18 տարու չի՞ կայիր:

— Ատ Աւետիս օլաճախը՞ կրեր է:

— Հա՛ ես:

— Ան իմին ... հայսէ չըսեմ, աղբարիս զրք էր սէ, մախսուս կրած է:

Մէկ կերպով չի կրցայ հասկցնել թէ ժամանակագրութիւնները սուտ չեն ըսեր — թէ ես այդ հաւատքը չունիմ — և թէ Աւետիս

Պատուելին շատ իրազեկ արձանագրողը եղած է իր ժամանակի անցքերուն:

— Ան իմին ... կ'ըսէր ու կերթար շիփ չիտակ բերանը ցօղուելու:

Իր կեանքին պէս մաքուր մահ մըն ալ ունեցած է Տիկ. Փարիս. — կաթուածը:

Գրեթէ դար մը ապրելով հանդերձ, ոչինչ աղտոտած էր իր մարմինէն և հոգիէն: Սուրբի մահով մեռաւ ան, մէկ ձեռքը խղճին վրայ և միւսը հորին չուանին:

Ինձմէ՛ զատ ոչ ոք լացաւ ետեւէն: Այս անցաւոր աշխարհին մէջ երկու բան կը թողու Տիկ. Փարիս: Անաղարտ անուն մը և մէկ ոսկիի պահանջ մը ինձմէ:

Վերջին ամսականս՝ վերջին յիշատակս եղաւ իրեն:

Ե. Ա. Գ. Մ.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Սկիւտարցիք այլեւս գանգատելու երբէք իրաւունք չունին, քանի որ Մնակեան խումբը յաջորդաբար ներկայացուց այնպիսի տրամներ, որոնք իրենց ունեցած ռեփուքուաւին զարդերէն կրնան համարուիլ:

Ժագ Վարլէյ, Հաւատք Յոյս Սէր և վերջին անգամ ալ Սիմօնէ-Մառի, որ իր հնութեամբը հանդերձ միշտ ամէնէն աւելի փրկուում տրամներէն մէկն է:

Նպատակս նկարագրել չէ խաղին նիւթը, անիկա արդէն ծանօթ է գրեթէ ամէն դասակարգին, միայն մէկ երկու դիտողութիւններ եթէ կը հաճին:

Էմէ Ժուպէռի դերը ստանձնած էր Տիկին Սաթենիկ, որ պէտք եղածին պէս ներկայացուց թէեւ, սակայն չեմ գիտեր ինչո՞ւ քիչ մը նուազ եռանդով կատարեց այդ դերը, որ ուրիշ անգամներ կատարելագործած էր պէտք է ըսել:

Բիէռ Լարթիքի դերը Սանճագճեան է քի. թէեւ ստանձնած իր միւս դերերէն շատ լաւ յաջողուց, սակայն Հօլասի պակասը բացարձակապէս զգալի եղաւ, մանաւանդ իններորդ վտարագոյրին, երբ Բիէռ կնոջը՝ Էմէ Ժուպէռի

կը համարէր իրենց զաւակին Մօրիսի (Ալէքսան-
տանին) գործած ոճիրները, և որոնց ամէն
մէկին կաւելցնէր «կիթ օնուսա օղլունա սօր»:

Աս աշխարհ, հիմա դռնանք միւս կողմը:
Մենք ինչո՞ւ թատրոն կերթանք զիտէք,
չէք գիտէր, ուրեմն ես ըսեմ, մտիկ ըրէք:
Օթեակէ օթեակ դիտակներով գործ ե-
փելու:

Ըրած թուալէթնիս ցուցադրելով խրգ.ը-
նելու:

Չաթըր բաթըր կաղին ուտելով մարդ
ձանձրացնելու, և կամ մէկ կանգուն բարձ-
րութեամբ և նոյնապի ալ լախութեամբ գըլ-
խարկ մը դնելով՝ ամբողջ բեմը գոցելու,
ինչ որ չիտակը չափազանց անտանկի կը
դառնայ:

Վերջի յիշած առթիօյօէս հատ մը կար
անցեալ գիշեր, և վստահ եղէք որ եթէ ի-
րեն պէս մէկ հատ ալ գտնուէր՝ բաւական
կըլար բեմին առջեւը պատ մը քաշելու:

Խումբը կիներու հանդէպ յարգանք մը
ընելու համար տոմսակներու գիները կէս առ-
կէս իջեցուցած է, աղէկ, սակայն պիտի ա-
ռաջարկէի որ յայտագրին վրայ աւելցնէր
նաեւ «պայմանաւ որ կամ գլուխին չալ մը
առնեն և կամ պզտիկ գլխարկ մը դնեն»
այն ատեն թերեւս հանդիսականները հան-
գիտ կրնան դիտել ներկայացումը:

Ունեցած թատրոնիս փառք Աստուծոյ
ամփիքատրոն մը չէ որ ամէն կողմէն դիւրաւ
դիտուի, ասիկա նկատողութեան առնելով
ըստ այնմ մեր փափկասուն տիկիները ու
օրիորդները պատշաճ կերպով վարդաբերու-
են իրենց գլուխները:

Խումբը ինչպէս ըսի իր գիները կէս առ-
կէս իջեցուց, տիկիներն ու օրիորդներն ալ
իրենց հեկալիի գլխարկները գոնէ կէս առ-
կէս իջեցնելու շնորհն ընէին:

ՆԵՐՇԱՊՈՒՀ

ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆԵԱՆ

Սկիւսար Պաղար-պաւի

ՕՍՄ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԻՆ ԿՈՂՄԱՆԷ
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՍԲ Պ. Մ. ՄՆԱԿԵԱՆԻ

1907 Օգոստոս 5, Կիւմկի գիւղի ժամ 2 1/2 ին

ՀԱՅԱԳՈՐԾ ԿԻՆԸ

Տրամ 10 արար

ԱՂՈՒՈՐ ՄԻ ԽՈՒՇԻԿ

ՆՆՆՈՇԻԿ ՈՒ ՇԻՔ !


«ԱՆՄԵՌՈՒԿ» ին

Կարգուելու մի՞տ ունի, mon ami,
եկե՛ք, ձեզի հետ բլլանք խրճամբ !
Ձեռքիս քակ ունիմ աղջիկ մը ծանօթ,
Աղջիկ մը դեմքով ֆիշիկ մը ցանօթ,
Կունս ու կարն հասակ, սանկ գերդ ձմեռուկ,
Կոչուելու արժան... մասամ «Անմեռուկ»:
Թափած, քափքիւած, անուցը՝ Մարքա,
Ա՛լ շատոց եղած աղջիկ մը մասոսա,
Մազերը՝ ցանցառ, միտքը՝ խիստ անձուկ,
Տարիքը քսես, եռսուցը անցուկ,
Գլուխ մ'ունի սանկ անագին, խոռո,
Դեմքն՝ աւագ-ուրբաք, անձայիս, խոժոռ.
Կուրծքերը՝ քափակ հիւս նման ումի,
(Ու բոլ կրկանը... Ասուած ողորմի !):
Այլերը գանկին մեջ քաղուած, խո՛ր, շիւ,
Որոց ի տես մարդ կը տարուի խորշի,
Գանկը երբ տեսնես անպատեալ դու մի
Կը նրմանցնես հսկայ դրդումի !!!
Երկար ականջներն միտք բերեն՝ բարակ,
Ոտերը խոռո, սրունցներն բարակ:
Հաստ երբունցներով մի խիստ լայն բերան,
Ուսն ալ քնկուած քակ ծանր բեռան,
Իմա, գրիչը ձեզ քսել կուզի
Թե՛ մեր այս հուրին ֆիշ մըն ալ կուզ է !
Mais tant mieux, զի իր այդ նոյն կուցակ
Պարապ կուրծքին տեղ գործածել կրնա !
Այսերն ու կզակ են մօտ գրացի,
Ձի ինչպէս վերեւ ես տրտնալի,
Ներա յաղթ դեմք գիծով մը զիկզակ
Դեպ՝ հարաւ նայի, ու հիւսիս՝ կըզակ...:
Թերութիւն մ'ալ որ միւսներն կ'աղի
Ձեր կիցն ապագայ շեք-շեքի կալ է,
Աւաղ, այդ չքնաղ հարսին կալ՝ աջէն
Ձոր ձեզի շիքն ինձի կաղաչեն...:

* * *

Բաց երբ իբր կին, ցէ չէ մի պարկ հետ,
Միւս կողման աղջիկ մ'է պարկետ,
Ձոր, հա՛րկ է քսել, կասկածի առանց
Կրնա օրերով բողոլ մեջ արանց.
Առաւելութիւն մ'որ ամեն երկան
Ձէ տրուած, ուսի... մի ընեք երկան...:

ԷՍ-ՍԷ



ԲՈՒՆՔԻԲՈ

Avanti mayestro, un pocou di բանասեղծութիւն allegro moderato!

Ըսէք չափօք բանաստեղծական երկու տող պսակ մը գնել նիւթիս վրան, յոգուածիս ճակատը, քանի որ extra extra Հայկայն կեանքէն է գրուածքս: Համմէ:

Մարմարայի կապուտակ ջուրերուն մակերեսին վրայ, գոյացած չորս հոգսպալարներուն (չիպան) է'ն մեծը, է'ն ճոխը, է'ն գեղեցիկը, է'ն մարդաբնակը, է'ն զմայելիին, է'ն դիւթականը, է'ն աչքառուն, է'ն տաքարիւնը, է'ն սա, է'ն նա, վերջապէս է'ն այն ամէն բաները, որոնք կրնան իբր ամական արուիլ պալարի մը՝ որուն մէջէն սակայն թարախի տեղ՝ բեմպեզար տէքօլթէներ կը վազեն հոս հոն:

Արրահամ Այվազեան, եօթն անգամ երուսաղէմ գացած է կրսին, ու ես, ձեր անառակ որդին՝ տասն և հինգ անգամ Բրինքիբօ:

Բրինքիբօ երթալը ինձ համար այն հաճոյքը կ'ապրէ, որուն նմանը չեմ կրնար ըմբոյխնել՝ ո'չ բօքէռի սեղանին, ո'չ ալ ֆոռֆօռ բէշերու շուրջ:

Շոգենաւր զգալով իր կոչումը, որ է կրել Հայ-Լայֆ դասակարգը իր ընդարձակ ծոցին մէջ, սիքապանծ կը կենայ կամուրջին մօտ և որուն կիւեքին մօտեցողը, անպատճառ մէկ երկու կարմիր կրելու է գրպանը՝ թո'զ զճերմակս և զճերմակածագուկս:

Մարմարայի վետ վետ ալեակները իսկ, մեղմիւ կու գան համբուրել հսկայ երկկայմին կողերն ու այտերը, որովհետեւ «զգեղեցիկ սեռս բարձեալ տանի»:

Ջուրերն իսկ կ'զգան, անոնք ալ իրենց յատուկ մասնաւոր սէրով մը կը վերաբերուին զգլխիչ հետիւլեաներուն, և ատոր համար է որ ատեն ատեն Մարմարան կը յուզուի, կը փրփրի և իր ամենի ալիքներով խորտակել,

քաշել կուզէ իր ծոցին մէջ ամբողջ չոգենաւր, թերեւս մէջէն ճերմակ պլուզլը մը գրկելու համար...:

Ու մենք բանաւոր էակներս, դեռ կը վարանինք, մեր բազուկներուն մէջ սեղմելու անանկներ՝ որոնց նախախնամութիւնը չէ զըլացած գեղեցկութեան ա' թերի շնորհները: Նա' մագիպէսներուն...:

* * *

Կիրակի առաւօտ է, մին այն կիրակիներէն, յորում երբ մարդ արու է՝ կաթուածէ բռնուած, իսկ եթէ էդ՝ ծիծմայր ըլլալու է որ դուրս չիցնայ:

Կարծեմ գիտէիք թէ Բրինքիբօ պիտի երթայի այդ օրը, թէեւ լրագիրները բան մը չէին գրած այդ մասին, սակայն ես ինքս լուր տուած էի Հանրագիտակի ընթերցողներէն աւելի ընթերցողներէն (որովհետեւ պըրթալներէն կը սոսկամ):

Երկուքին շոգենաւր վեց մաս ջուրը իջած է ալ, այնքան շատ է բազմութիւնը: Բոլոր Բէռօթները, սիվրիսիկներէն անկվաքօ դէմքերով այրեր, ինչպէս նաեւ, քարուկիր արաւթմաններու մէջ խաշած միսիք սուռաթլը տամաներ (ինչպէս պիտի սիրէր նմանցնել Լիլա), ամենքն ալ ժամ առաջ եկած շարուած են հող, տամենէնը թիւին քեռաւր քով քովի, դէմ դիմաց ու շոգենաւին ծխնելոյզին ֆոնֆուռ ընելու չափ առատ ծուխ մը ամենուն բերնէն դուրս կուգայ:

Պահ մը աջ ձեռքս գրպանս ու գլխարկս գաւազանիս կոթովը, ապահով՝ կը դիտեմ, չորս դիւ կը նայիմ, տեղ գտնելէ աւելի սանկ աչքիս յարմար պատկեր մը գտնելու համար, որ կարենայ առանձնութեան ձանձրոյթս փրկել մինչեւ կղզի:

Sacré nom de tonnerre! բոլոր էլէ կէլիրները անկամէ են, մէկ տամայի չերկու, նոյն

խակ երեք քավայիէ, որոնք մականլիւրայի պէս իրենց մէջտեղը առած ճերմակ ճերմակ կին-
ծաղիկները, ամուր մը սեղմած են, կրնամ
ըսել խեղճերուն դրած քօւսէներէն ալ ա-
ւելի նեղութիւն պատճառելով անոնց:

Վերջապէս, կէս հակափորցու տեղ մը
ցոյց կու տայ ինձ մանկամարդ կին մը, որուն
աչքին մէկը — Աստուածային ճիւղէ — իր
քավայիէին կը նայի միւսը ինծի, հակառակ
աջ ու ձախ գտնուելուն:

Պաւլօ! աս գործիս կու գայ, քանի որ
ես ալ կողմէն ֆլիրթած միջոցիս, կնոջ ձախ
աչքը շիրին նայուածքներով պիտի ապահո-
վէ քավայիէին կասկածները: Կինը չիլ էր:

Բաղդը ամեն ատեն չփափր, երբեմն ալ
սուրաթները կը կախէ կըսեն, և ըսողները
իրաւունք ունին:

Շոգենաւը կը սուլէ, կը մեկնի ու կակսի
ճեղքել Մարմարայի կապոյտը, ու ես, կռա-
հելով թէ, ֆիլէ ֆլանելիս տակ փափախող
ու փափաքող սրտիս յագուրդ տալիք պա-
տառ մը չպիտի գտնեմ, ինը գրպաններս
պրպտելով հազիւ հազ կը գտնեմ կարդալիք
բան մը, Սմբատ Դաւթեանի գիրքերու ցան-
կը ցոյց տուող պզտիկ պօռչիւռ մը, զոր
գոց կընեմ մինչեւ մեծ կղզի, մէկ ու կէս
փամ, ամբողջ ուսումնասիրելէ վերջ, fade-
mieux! հակառակ աջ սրունգիս որ պուսս
Ֆուռուցի կըլլար Եհե-պեհ տիկնոջ շիւթէա-
պատիւ սրունգին ջերմութիւնէն:

Կղզի ոտք չի դնողները գաղափար չունին
այն բաներուն վրայ՝ որոնք քիպարութիւն,
հարստութիւն, բարձրութիւն, ազնուութիւն
կանուանին:

Գրնալը, Պուռկազ, Հալքի, հանդիպելէն
վերջ կարծես շոգենաւը իր վրայէն հանեց
ինչ որ կը կրեի իբր ատան կարապետ, ու
բուն իսկ մարմինը, միջուկը քերաւ յանձնել
իր վայրում տեղը՝ Բոլնիքո:

Շիտակը ըսելով՝ հակառակ անառակ որ-
դի մը ըլլալուս, կարմրեցայ, խիպ և ամօթի
կարմիր մը եկաւ գոյն տալ հովէն ու ծովէն
դալկացած դէմքիս, ի տես այն աղնիւ խժո-
քին, որոնց կոթի բեռլ սկառքիներու տակ կը
հեծեր կղզին:

Շիտակ Տեպառֆաշեռ, ուր սովոր են
դիմել ամէն անոնք՝ որոնք անծանօթ ըլլա-

լով տեղին, էն առաջ հանդիպած ամբողջին
կը գրաւեն, ճիշդ կարգ մը հանգիստականե-
րու պէս՝ որոնք սրահէն ներս մտնան թէ չէ,
անմիջապէս տիտիկ կընեն խպնելուն:

Նախորդ գիշերուան մէջ քուռ քը լիլէն
յոգնած և կամ բօքոյն սեղանին վրայ երե-
սուն քառասուն կարմիր ձգածներ, անդին
լուսէ լուս ֆլիրթող գնատ ու գունատ ե-
րիտասարդներ, բոլորը նստած են քարէ սե-
ղաններու վրայ:

Հիմա, ո՛վ դուք՝ որ կանուանուիք Սկիւ-
տարցուհի, Սամթեայուհի, և ամէն այն
գիւղերէն և արուարձաններէն, ուր տասն և
հինգ օրը անգամ մը պզտիկ չամաչը կընէք,
և շարաթը անգամ մըն ալ գլուխնիդ կը
լուաք, օր մը հոս եկէք, հո՛ս, Բոլնիքո,
որպէս զի ճաշակ ըսուած բանը տեսնաք,
գոնէ աչքով դիտէք, օրուան թուալէթները
այս ամրան մօտան, որպէս զի քիչ մը կուսօ
ըսուած բանին համը առնէք:

Այս տարի միւսը սուղ էր կըսէին ամէն
անոնք՝ որոնք չարթէ չարաթ միս առնելու
սովորութիւնը ունին և կիրակի ցերեկն ալ
խաւարմա կուտեն, այդ եսնամներուն կը
յանձնարարեմ կիրակի մը մեծ կղզի այցելել,
ուր պիտի գտնեն միսերու ընտիրը՝ պըլըխ
պըլըխ, բայց սա տարբերութեամբ որ փո-
խանակ խըլըռճըխի՝ բոլորն ալ մարեա:

Կոկիկ միւզիք մը հոն անկիւնը կը զարնէ
plus en vogues եղանակներ, որոնց հեշտալուր
ներդաշնակութենէն գինովցած յաճախորդ-
ները կը խօսին, կը խնդան և մինչեւ իսկ
կաթնաբոյր թաթիկներու կատակներ ալ տե-
ղի կուսննան քավայիէի մը պիզ պիտերուն
և կամ ուսերուն վրայ:

Ինչո՞ւս պէտք, ինչ խալթ ուղնն ան ու-
տեն, փորս անօթի է, ու դեռ չատ տեղ
ունիմ աչքէ անցնելիք:

Կը մեկնիմ, պզտիկ գաւաթ մը snobifo
կուլ տալէս վերջ, որ աչքերուս փայլ տալու
յատկութենէն զատ՝ ախորժակս ալ սրելու
առաւելութիւնը ունի:

Հոս չպիտի ըսեմ թէ՝ ուր և ինչ կերայ,
սա չափը չի մոռնամ յիշել թէ՝ տոմարէս
սալաթաւի մը չէր կերածս:

Ժամը վեցն է: Չորս դիւ կը նայիմ, և մէկ լալս կը պակսի, լքուած մը, նետուած մըն եւ կարծես ահագին կղզիին մէջ, մարդ մարդասանք չիկայ, ամէն ոք իր տունը քաշուած է: Աստուած իմ, ո՛ւր են, ո՛ւր կորսուեցան ճերմակ պուշները, բամբուկ կուրծքերը, սիմիթ մէջքերը, պոչով աշուկները, խումբի բերանները, դաշնակի մատներուն պէս ճերմակ տաափն աշտերը, կեռաս շրթները, ոսկի մազերը, միտեա տառիները, բարեձեւ սրունքները, ո՛ւր են, ո՛ւր, ո՛ր ճէհէլէմը դաջին ըսելս կուգայ, սակայն ինքզինքս կը բռնեմ յիշելով թէ՛ կղզիին մէկ կիրակի ցերեկ մը անցնելը՝ Սաւարայի մէջ ճամբորդելուն կը նմանի ըսած էր բարեկամներէս մին, որ քեզիք ընելու չափ ձանձրացած ըլլալը պատմած էր ինծի:

Հոս կը դառնամ հոն կը դառնամ, կրկին կը տեսնեմ թէ կղզիին մէջն եմ, ջուրերու կեդրոնը:

Վերը՝ Որիստոսի ծառատառնները կելլամ աւանակապաշիւ գնացքով մը, ու հոն հազիւ հասած թէ չէ, ծառի մը բունին տակ գիր' Ղերկի զոյգ մը կը նշմարեմ, գիտէք ո՞վ... յոյն սպասուհի մը և շոգենաւին մէջի ափն չիմաճին, որ թեւէս բռնելու աղնուութիւնը ունեցաւ քիչ մը առաջ, և մի քանի ընտանիքներ:

Վար կիջնամ, ուրիշ տեղ մը կերթամ, բուռ սը լիլը կընեմ, բանէ պակաս չի մնալու համար, և ճիշդ ժամը տասնին կրկին կը դառնամ վար, Տեպաուֆաէուր ո՛ւր...

Ալ գրիչս չի կրնար պատկերացնել լիւքը, ճոխութիւնը, բուպէթը, մօնսը վերջապէս զոր գրաւած է ամբողջ քաղինոն:

Ամէն ինչ նոր ու թարմ թափ մը առած է կարծես, քունէն յափրացած ժողովուրդը ալ աւելի ուժեղ և գեղեցիկ եկած է հող ըմբոխնելու ափն քիպար, այս բառով, զուարճութիւնները զորս միմիայն Բոխմիբօի մէջ կանցնէն: Միւզիքը կրկին կը գոռայ հոն անկիւնը ու կառածները քրտնած քարեշտրի գաւաթներ կը թոցնեն ձեռքէ ձեռք: Նաւակներու մէջ գեղեցիկ սեռը պտոյտներ կը կատարէ նաւամատոյցին մօտ, երիտասարդներ բայ կը խոնարհէն աջ ու ձախ և յանկարծ՝

— Վո՛ւ... ո՛ւ... ո՛ւ... ո՛ւ...

Սառնախախ' ըսելը կուգայ մարդուն, վերջին շոգենաւն է որ կը սուլէ, հրաւէր կարգալով ամէն անոնց՝ որոնք գիշերը հող անցընելու չափ կարողութիւն չունին:

Կը թողում ամբողջ, կը թողում աղուոր կիները և զանոնք պարփակող աղուոր թուալէթները, ու տոմսակ ի ձեռին շոգենաւ կը մտնեմ, չի մոռնալով սակայն հետ առնել՝ աղուոր կիրակիի մը սքանչելի յիշատակը:

* * *

Յ. Գ. — Դուք ալ ինձ հետ կը բարկանա՞ք արդեօք, երբ ըսեմ թէ՛ չար բաղդէս, առաւօտեան նաղէնիմը, ան չըլլալիք չիլ կինը կրկին անգամ զիս տեսնելուն, ճիշդ մօտը տեղ կը բանայ, որպէս զի ոտքի վրայ չի մնամ...

Ու երբ երեկոյին Բերա կը հասնիմ, աջ սրունգս քննելով կը տեսնամ թէ վերքի մը պէս սեւցեր է մարմնոյս ափն մասը որ՝ տիկնոջ սրունգին փակած էր՝ ամբողջ ճամբուն տեսողութեանը:

Կրակոտ տիկին, mais pas pour moi !

ԲՕՊՈՒՍ

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Հայուհեաց Վարժարանին նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկերթ տանտիկիներ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամիտ հոգածութեան առարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ, Անգլ, Թուրք և Ֆրանս. լեզուները: Ինչպէս նաև բնական, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեւագիտութեան, կարի և ձեւագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 Օսմ. Ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանել տարեշրջանին սկիզբը, և կէսը ծննդեան արձակուրդին: Դաշնակի և երգէհոնի համար կը պահանջուի 5, 3 և 2 ու կէս Օսմ. Ոսկի, դասառութեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Մեպտ. 11 ին (Ն. Տ.) Դշ. Երեկունը:

Աւելի տեղեկութեանց համար խնդրել վարժարանին յայտագիրը, կամ գիմել Մր. Բիթի, Պոլսի-Հոտուկ, Պոլիս, կամ գրել Տր. Ս. Էֆ. Գալաֆեանի, Ատենայեան Խնամակալութեան, Ատաբազար:

ԳԻՆՈՎ ՄԱՐԻՑԱՆ

ԴԻՏՈՂՔ ՄԱՐԵՑԱՆ

Խնդալէն անշուշտ:

Վոսփորի հանգոյցին վրայ բաշավաճի Մուշոնին չողիկ վազցնելու չափ խիստիկ ու հինկէկ տուններով Եէնի-մահալլէն որ, տարին երեք ամիս իր ծոցին մէջ կընդունի թուրք աշն ընտանիքները, որոնց տան տանիքները ութը մէթըրը չեն անցնիր: Եէնի-մահալլէն այս ամիսներուն, նոր հարսի մը պէս իր եէսիի, սեփիի թուալթը կուտայ, չնորհու եազըլիսներուն, որոնք կուգան կը շէնցու-նէն, կը պճնէն զինք և ատոր համար է որ այս եղանակին այդ գիւղը գացողը, չիւրիկ ակուայի պէս փատած տուններու չեփիւկ պա-տուհաններուն առջեւ կը տեսնէ օնիւլի մաղերով քուան քառան պլուգաներ, հոգ չէ թէ ատոնք սաքէն լիւսի տեղ մեքմեք ռանի ըլլան, բաւական է որ տակէն միս ցուցնելու չափ բարակ ըլլալու յատկութիւնը ունենան:

Պէտքիւք տէրէն Հայ-Լայն, իսկ Եէնի-մա-հալլէն վայ-լայն եթէ կոչենք՝ Աւետարանէն թուղթ փրցուցածի չափ մեղքը մտած չենք ըլլար կարծեմ:

Բայց զբօսանքի և ժամանցի տեսակետով, պէտք է ըսել թէ՝ միջակորեար դասակար-գին այդ չքնաղ ամարանոցը՝ միակն է կ.Պոլ-սոյ մէջ, և որուն նմանը երկրագունդին ոչ մէկ անկիւնը կարելի է գտնել:

Եէնի-մահալլէի մէջ եթիֆէք ըսուած ծուիկ, կեղծ ու պատիւր զէվզէկաբանութիւնները չիկան: Գիշերնոցով գրանը առջեւը նստիլ, առանց փօ-ֆօլի քաղինօն երթալ, պարզ պը-լուզայով մը գրացինին երկնալ, քեռլիկնե-րով բիացա ընել, այս բոլոր հանգստութիւն-ները Եէնի-մահալլէի յատուկ առաւելութիւն-ներ են, և ատոր համար է որ էսնաֆի դա-սակարգը հոգ կը դիմէ՝ ու հոգ կանցնէ ա-մարուան եղանակը:

Բայց որովհետեւ տեղերնիս նեղ է, ու ժամանակն ալ սուղ, ուստի այս տաքուն

առանց չապիկ փոխելու աստիճանին հասցը-նելու մեր ընթերցողները, անցնինք բուն նիւթին, քաշելով սիկառ մը սաչախլը թիւ-թիւն, պատմենք պատահածը գիւղին մէջ բիւթիւն:

* * *

Ամուսնոյն յոգենաւին մէջ մէվքիսիզ նըս-տելովը զիգած և իրեն ալ բազմիքին կէս խուռնայ բռնելովը էքօնօմի ըրած դրամնե-րուն վրայ աւելցնելով բո որ ըրզակները ը-ռէհին զնելով՝ վերցուցած գրամը, Տիկին Մարիցա յաջողած էր այս տարի Եէնի-մա-հալլէ տուն մը բռնել, ուր կրուած էին ա-միսէ մը ի վեր: Յուսեփ աղա, որ տանը էրիկմարդը ըլլալու պատիւը ունէր, միմիայն բանթալօնէն ու պիսերէն կը զատուէր կը-նոջմէն, ամէն բան կընկանը ձեռքն էր, ու ինք պարզ գործիք մը ցերեկուան ու գիշեր-ուան համար:

Կուզէք նկարագրեմ տիկին Մարիցան:

Լայ քը պոյէն վաթսուն սանթիմ պակտս, էսմէր՝ չավտար հացի պէս, գէմքին վրայ հինգ վեց պէնկերով, որոնք ոլորուելու չափ երկայն մագերով զարդարուած են: Աղ պըղ-պեղ մագեր, բաղէիքէ ելածի պէս սիւզ փատ կտրած, ինչպէս կը նմանցնեն կիները, սեւ աչքեր խոշոր, բերան մը՝ որուն բացուած-քէն ներս Շիրքէթի 60 թիւ ուշխուռլու չո-գենաւը հանգիստ կրնայ մտնել գոյցես՝ ա-ռանց պառկաւիցաները չըթունքներուն դպցնելու: Կուրծքերը, մի ստիպէք որ նը-կարագրեմ այս տաքուն, ձմեռը կը խօսիմ ատոնց վրայ՝ եթէ չի մոռնամ: Բնութիւնը արտառոց իր ֆիզիքականին պէս, սակայն և աշխատէ ճախածի, ըսող խնդաղող և քիչ բուն մըն ալ հովառսա:

Պէտք է գիտնաք որ կիներու հովառտան, այր մարդու չի նմանիր, ինչպէս նաեւ անոնց գինովութիւնը:

Տիկին Մարիցա ախշամճի ալ է ամէն տէրտիս վրայ:

Ըսի՞ թէ հասուկ՝ քսանը անցուկ աղջիկ մ'ալ ունի, որ կարգելու համար հոգի կուտայ և սակայն պիւրիւննիկ շապիկի պէս ամէն օր կոնակը կը պտտցնէ այդ տէրտը, և թերեւս այդ բանին համար է որ ինքզինքը օղիի տուած է:

Իրական պատմութիւնը, զոր պատմելու պատիւը պիտի ունենանք, կսկսի շաբաթ իրիկունքէ:

Տիկին Մարիցա այս տարի նոր չինած բարակ բուրդեւ ֆիստանը հագած, իր կիւլիկին հետ, որ ան ալ իր կարգին ճառթ թուալէթ մը ըրած է, քով քովի կերկնաւ մինչեւ նաւամատոյց, դիմաւորելու համար Յուսէփ աղան, որ կուշանայ:

— Աս վարօռէն ալ չեղաւ մայրիկ կըսէ օրիորդը, բէշը վեր բռնող ձեռքը փոխելով:

— Սայղըսըղը կը մտածայ քի, մինչեւ քի չի մուծնայ նէ օթթան չեղար կէճէ խուշիի պէս ... կը պատասխանէ Տիկինը, փողոցին երկայնքը մէխանային դուրսը նստած օղի ձնկողներուն վրայ նայելով և թուքերը կուլտալով:

— Ամա տուտո՞ւ, պէլքի գործ ունի հայրիկս, ատանկ մըսեր, աս իրինկուն շաբաթ է, ուֆախ թէֆէխ կը շտկէ կոր պէլքի ...

— Դուն անանկ գիտես, հիմա կալու ըլլայ նէ կը տեսնաս, երկու ծառքը մայիս սթախօղիի պէս պօշ է ...

Նոյն ատեն, ինչպէս զիւղին սովորութիւնն է, ուրիշ ընտանիքներ ալ կուգան նաւամատոյցին դուրսը, իրենց էրիկմարդուն սպասելու:

— Նայէ տուտու, ասոնց հայրիկներն ալ տահա չեն եկեր ... կըսէ օրիորդը իր հօրը կողմնակցութիւն ընել ուզելով:

— Հա ամա՛ անոնց էրիկմարդը կը կենան քի քանի մը դրուշ էվէլ ճէպէպէմիշ ընեն տէյի, մէրինը իսէ, սըլըգ սըլըգ կը պտտի չարչին ... աս վախիթ ո՞վ կը մնայ հոգ քի մալ ծախէ տէ թէլլալութին ընէ ...

Մինչ տիկինը կը խօսէր, ուրիշ կին մը իրենց մօտենալով հասուկ աղջկան մը հետ:

— Բարի իրինկուն ձեզ, աճապ աս քանիքն վարօռն է ...

— Մենք ալ հոս տեղին աճէմին ենք քուրուկ չիտեմ, կըսէ Մարիցա, սիւլիւկ

իքվիները վեր հանելով, որի՞ կը պէլէյէք կոր քի ...

— Հիշ ճանրմ, մախարմիս նշանածը խօսք տուած է քի աս շաբաթ գիշեր դայ տէյի, էյ տունը չիտէ, իշտէ անոր համար եկեր կը պէլէյէք կոր քի, վարօռէն ելլալուն կիպի առնենք երթանք ...

— Հա՛ ... էյ ուր է նէ հիմա վարօռմըն ալ կուգայ, քիշ մը պէլէյէք պիտի ...

— Քա եավրում, պէլէյէլս հոգս չէ, տահա երթամ թաս քէպապիին տիպը բաթլիճան պիտի քէպապ ը եմ, հիմա դուք դուրսէն ետպանծի չէ՞ք եա, էյէր չի գալու ըլլայ նէ չպիտի չինեմ ...

— Էյ տղան ինչէնի՞ է, աֆ կընես հարցնելու, թէքիֆսիզէնմիշ եղանք տէ անոր համար կը հարցունեմ կոր ... կըսէ Մարիցա, ներսիթիէն արուն գալածի պէս նաւառնէն սրտնեղած:

— Ը՛նհ ... Աստուած տիւշմանիս դէմը, ասանկ փեսայ հանէ, սա կիտես մաղաղա մը կայ քի Ըստամպօլ երկու դուռը պաց պիւր տիւզ միւշտէրի կը մտնայ կիւլայ, իշտէ ատմաղազային մէջը բէք էհէմիշթիլի գործ մը ունի եղէր, մինչօք Բարսեղիկը չըլլայ նէ գործ մը չի դառնար եղէր ...

— Էյ խէրը տեսնաս, ամա չի կրցայ հասկընալու, ամսականը քանի՞ է եղէր ...

— Ինէ կը պահէ կոր ամա, խլավուղը իլէն ծառքի տակէ հարցուցած մարդիքս ըսին քի երեք հարուր իծծուն է ամա՛, տահա առջին պաց է եղէր ...

— Էյ թրախօմա կուտա՞ն կոր պարէ ...

— Լուսահոգի հօրը ձգած փարոն կայ իշտէ, իծծուն օսկի քի տիւմանը վրան պահեր եմ, ատ իլէն թէյզէիս վրայ կէս տուն կայ, թէյզէս ալ ասօրուան վաղուան է իշտէ, հէմ ալ տղան աս տունին հիսէին համար մինչօք քի, նայող հէքիմըն չի հարցուց չի փընտռեց, երթալոց ըլլալը չի հասկցաւ նէ՞, աղջըկանս մատին օսկի հալխան չի պերաւ տէ չանցուց ...

Նոյն ատեն չոգենաւը կուգայ և ճամբորդները կսկսին դուրս պոռթկալ: Մութը կոխած է հիմա, լուսերը վառուած ու բոլոր դիմաւորելու եկող ընտանիքները իրենց էրիկմարդը գտնելով դէպի տուն կուղղուին:

Յուսեփ աղա, մէկ ձեռքը բռնեմք մը, միւս ձեռքը տոպրակ, կուգայ միանալ իր ընտանիքին, մինչ անդին նշանած միւսին չերեւար:

— Աֆէրի՛մ, աֆէրի՛մ... էյ աֆէրի՛մ... կըսէ Տիկին Մարիցա զէմքը կախած, ո՛ւր ես աս վախիթ ...

— Աֆ կընես էրիկս, իրաւ քի ուշ մընացի ամա, նա գլոխս հաւկիթի խապուխէն ալ պարակ է, զարկ կոտրէ կուգես նէ ...

— Հէ՛մ ուշ եկուր, հէ՛մ ալ էյլէնմիշ եղիր հետս ...

— Վախնամ աս իրինկուն տահա սիֆտահ չես ըրեր, դուն կուգես նէ իրինկունները քովդ ի վար չօթուա մը կախէ, քանի քի միտքդ իյնայ նէ պերանդ առ կընի՛կ ...

— Սըտեղը մէկ ըռախի մը ունիմ, տահա՞ ... չօգ չէյ, էլ ալէմին կընիկը ըռախիէն զատ տահա ինչեր ունի ինչե՛ր ...

— Հայտէ աղջիկս սա քիւֆէն դուն առ տէ տուն իյնանք, զէրէ անօթութենէս զաֆուսս կը դառնայ կոր ... կըսէ Յուսեփ աղան ֆէսը վեր նետած քրտինքը սրբելով:

— Ամա հայրիկս ամօթ է, հէ՛մ ես նասըլ առնեմ, բէ՛շս նասըլ բռնեմ ...

— Ինծի նայէ Յուսեփ աղա, հայտէ դուն կամաց կամաց էրկնցիր, մինք ալ կուգանք կոր ... էհէմմիէթի գործ մը ունիմ կէս սահաթի խըտար ...

— Կընի՛կ, ատ գործը տունն ալ կը տեսնաս, տունին մէջը կը խմէիր կոր, նէ իսէ ծան չէինք հաներ կոր ... աս հիմա ալ մէխանանքը պաշլայէցիր սօլաչօ ընել, հիչ տէյիլ իսէ պօյդ ի վեր աղջիկդ մեղքցիր ... կըսէ Յուսեփ աղան կրակ կտրած:

— Ան քու գիտնալիք բանդ չէ՛ ... վայնի վրա՞դ ... ես չըլլամ նէ իշտէ աշանկ, հէլպէթ իխթիզալը բան մը կայ գործին մէջը քի ասանկ կը սահմանեմ կոր ...

— Էյ ատտար իխթիզալը է նէ՞ ես ալ գամ ...

— Չէ՛, չէ՛, էրիկմարդու գործ չէ, դուն երկնցիր, մինք ալ կուգանք կոր ըսելով խեղճ մարդը տոպրակը ձեռքը տուն կերկընայ, ու երբ մայր ու աղջիկ մինակ կը մնան, օրիորդը խօսք կ'առնէ ...

— Տուտու, մէռաք եղաւ ինծի, ի՞նչ

կայ, ո՛ւր կերթանք կոր, կը հարցնէ օրիորդը արմացած զարմացած ...

— Դուն սուս, ես աս գիշեր պէճերուիմ պիտի, դուն ալ սէյիւր ըրէ, սա տէմինքի կընիկը ո՛ւր գնաց անապ, կը տեսնա՞ս կոր ...

— Նա՛, իսկէլէյին դլուխը կայներ են ...

— Հա՛, իշտէ ըսել է քի տահա չէ եկեր, թամա՛մ, ուղածս ալ աս էր, ըսելով զէպի անոնց կը մօտենայ,

— Չօգ չէ՛յ, տահա չեկաւ միւսին հէ՞ ...

— Սուս եղիր քուրուկ ֆէսֆէսէ կընեմ կոր, ասկէ ետքը մէկ վարօռ մը տահա կայ եղեր, էկէր աս վարօռին ալ չելլայ նէ եանի անկրծակներու պիտի գամ ...

— Նա՛, արեւը սիրեմ, հասրէթ գալուչ տուրանը կուգայ կոր լուսերը վառած, իշտէ ասոր մէջը ըլլալու է ...

— Աղէկ ամա, գիտնալս աղատ եկաւ, ինչո՞ւ հետն ի վեր չի գացիրք ... կըսէ օտարուհին զարմանած:

— Հա՛ ամա՞, անիկայ մինչեւ կաղինօն չերթայ չի խմէ նէ տուն չի գար, մինք ալ տիօր ատ վախիթը սօլաչօ մը ընենք ըսինք, ձեգի ալ սիրտս բէք սիրեց, նորէն երթամ տէ երկու չիֆթ խօրաթուինք ըսի ...

— Էյ աղէկ, Աստուած տայ աս վարօռէն ելլար տէ իմ սիրտս ալ տեղը գար, աղջիկս օր ըսես նէ հաւկիթներ կածէ կոր կայնած տեղը ...

— Հախովը, առջի պերան նշանածն է հէլպէթ, կէշ չըլլար մի եա՛ ...

Նոյն ատեն չոգենաւը կը մօտենայ ու բուր չարքըրքերը դուրս կիյնան, մինչ ասդին, չորս աչքով անցնողները կը գիտեն միւսին ձեռք ձգելու համար:

Յանկարծ, բառին բացքումալը առումովը միւսիւ մը, ակնոցը քիթին, չիք, թեթեւ, չուպուխի պէս, պեխերը վեր վեր, բարակ գաւազան մը ձեռքը չորս դին նայելով, տարտամ քայլերով նաւամատոյցէն դուրս կելլայ, մինչ անծանօթուհին,

— Հոս ենք եավրում, նա խոխտիկդ ալ հոս է, քա եավրում աս ո՛ւր մնացիր, ֆէսֆէսէս մեռայ մեռայ տիրիլմիշ եղայ նէ ...

— Աֆ կընես մայրիկս, քիչ մը ուշ մընացի, մաղազան գործ ունեցա՞յ տէ, ըսելով ձեռքը կը պագնէ, և իր նշանածին ալ ձեռ-

քը ամուր (amour) մը թոթուելէ վերջ միւս-
ներուն ալ մէկ մէկ ափէո կընէ ու կը կե-
նայ ...

— Ներեցէք մայր, տիկինը և օրիորդը
առաջին անգամն է որ կը տեսնեմ հոս ...
կրնամ ներկայացուիլ արդեօք ...

— Հա տղաս, հոս էին, ան ալ իր էր-
կանը կը պէքէյէր կոր տէ, իշտէ սանկ խօ-
րաթուեցանք ...

— Շատ լաւ, այս ժամանակ ինչպէս ան-
կառօն կրնան տուն երթալ, եթէ կը հաճին,
իրենց կրնամ ընկերանալ մինչեւ տուն ...

— Քա պօյըդ սիրեմ զաւակս, զնայ,
տա՛ր, զարար չունի ամա՞ ...

— Ախ շատ չնորհակալ կըլլամ միւսիւ,
ինչ խրատար քի չեմ ճանչնար նէ, ֆախաթ
անոնք ալ մինակ չի մնա՞ն ...

— Հա ետ, մենք ետքը ինտո՞ր տուն
երթանք ... ատ ալ կայ կըսէ ջատուկը,
չուզելով որ տղան անոնց հետ ընկերանայ,
քանի որ ան ալ հասուկ աղջիկ մը ունէր որ
դէմքով իրենէն աւելի գեղեցիկ կերեւար ...
չնորհիւ դգալ բուտոասիին որ կը վալվէր
կազերու լոյսին տակ:

— Հիմա նայէ ինչ կընենք քուրուկս,
անէ քի սըտեղը քրոջ պէս տեսնուեցանք նէ,
մէկտեղ ձեր տունը կերթանք, ձեզի հոն կը
ձգենք, միւսին ալ մեզ կառնէ տուն կը
բերէ կը դառնայ, հէմ ալ էվէլօք կէօրիւշ-
միւշ եղած կըլլանք ...

— Չօգ չէյ, ամա քու էրիկդ հիմա քո-
վըդ էր, ձգեցիր տէ աս էգիյէթները կը քա-
չես կոր տէյի պիր միւմքին խելքս չի զօրեր
կոր ... կըսէ տիկինը, մինչ օրիորդը մէկ
կողմէն բէշը վար ձգելու աստիճան կը քա-
չէ, որպէս զի հաւանութիւն չիտայ միւսիւին
այդ քօմբլիմանը ընելու:

Հրամանցէք տիկին ... ինչպէս նախա-
պէս ըսի, պատրաստ եմ և յօժար զձեզ տուն
առաջնորդելու, քանի որ ...

— Ամա տղաս, չըսեմ ըսի ամա, գուր-
ցունել տուիր, տահա տուն երթամ տէ ման-
ճախն տիպը բաթլիճան պիտի ընեմ ...

— Ռեզօն սը բիւս ...

— Հէ՞ ...

— Այսինքն աւելի լաւ, ժամանակ ու-
նինք ըսել է բարեացակամ դաճուելու տի-

կինին և օրիորդին, որոնք մեր առնակսն օ-
ժանդակութեան պէտք ունին ...

— Պիւպիւլ է ի՞նչ է քա աղջիկ, աս
լօխման ծառքէ հանելու ըլլամ նէ, իս մե-
ռածէն սեպէ, կըսէ տիկին Մարիցա աղջկանը
ականջին, ու,

— Էյ վախիթ մ'անցնէք, հայտէ ճամբայ
իյնանք ըսելով՝ բոլորը մէկ դէպի տուն
կուղղուին:

Միւսիւ Չուլթութմաղեան, որ ըստ ալա-
ֆըրանկային բոլոր զինքը ճանչցողները միւ-
սիւ Չուլթութմաղ կը կոչէին եանը եան չըզ-
միշ ընելով, քօմբլիմանի է՞ն տաք դար-
ցուածքները կը շռայլէր, որոնց ի լուր նշա-
նածը և մայրը մահման քրտինքները կը մըտ-
նային:

— Ինծի նայէ եավրուս, կըսէ տուտուն
ճարահատ, ալթըխ մենք եկանք, աճապ
սանկ ետեւնուն նայիս նէ կըլլա՞յ ...

— Ախ ... շանգաւակ թապիյէթս, թախ
չօճուլթութենէս պէրի է, արեւը մարը մըտ-
նալուն կիպի վախ մը սոսկում մըն է կառ-
նէ սիրտս, չէնէ ի՞նչ տէյի զահմէթ տայի
միւսիւին, նա՛ մեր տունն ալ սա սօխախին
մէջէն դառնալուդ պէ՞ս հոն է:

— Ինչ չար սահաթ է եղէր քի աս եու-
մուռճախը ըռասթ եկանք, կըսէ տուտուն իր
կարգին, աղջկանը ականջն ի վար,

— Աման մայրիկ, բիւթիւն դուն ես սէ-
պէպը, իս խողը պիտի դնես ա՞յ է, ինչո՞ւ
եւար քովերնին գացիր, լախըմտը բացիր տէ
ախպապութիւն ըրիր, հիմա եկու տէ զապդ
ըրէ, նայէ պիր տիւզ աղջկանը երեսը կը
նայի կոր ...

— Քա եավրում զոզ մ'ելլար, ի՞նչ ը-
նենք բան մը քի գլոխնիս եկաւ ...

— Հիմա երթայ տուներնին ալ պիտի
սովրի՞ ...

— Ուրեմն մենք կրնանք բաժնուիլ տի-
կին մայր կըսէ միւսիւ Չուլթութմաղ, երբ
իրենց տունին առջեւ կը հասնին ...

— Էյ հա՛ ամա, սանքի ... աճապա ...

— Այո՛, այո՛, հիմա կը ձգեմ կուգամ,
տիկին մայր ըսելով կը մեկնին, մինչ տիկին
Մարիցա խօսք առնելով, նիսպէթ պիչիմի,

— Աֆ կընէք քուրուկ, միւսիւնիդ կէս
սահաթ ալարա ըրի ամա, եէուլի չէ հոգ մը-

նէր, կէնէ ձեր քիւմէսը պիտի թառի ...

Ճամբան երբ փողոցը կը կրկնեն, օրիորդը որ — մօրկանը զաւակ — լաւ գիտեր պոչ խաղցնելու վերջին սիւթէմները, միշտ տըղուն քովէն կը քալէր և ատեն ատեն թեւը թեւին դպցնելով կը յառաջանար ու իրենց ետեւէն եկող մայրն ալ կը մըմռար՝ հազիւ լսելի ձայնով մը.

— Պօյերնիդ սիրեմ, ան ընտո՞ր ալ վայելի՞ր էք... եավրո՞ւմ... պէտքը չէ՞ր քի առաջուրնէ իրար ճանչնալինք...

— Ա՛խ մայրիկի ոտքս դարցաւ կըսէ խուռնագ աղջիկը յանկարծ կենալով:

— Ամա՛ն աղջիկս ի՞նչ եղաւ, քարի՞ եկաւ... չօզ չէ՞յ... հիմա՞յ...

— Ամա՛ն մայրիկ, չեմ կրնար կոր քալե՛ր:

— Հանգիստ ըրէք օրիորդ ըսելով, միւսիւ Զուլթուլթմազ թեւ կու տայ օրիորդին որ չմերթէր, բան մը որուն համար արդէն այս բլանը գործած էր...

— Վո՛ւյ ապրիս եավրուս, ողջ ըլլաս, Աստուած բարի խըսմէթ գէմդ հանէ... եավրում, է՛յ հիմայ տահա ճանցայ ամա, շատ ապրիս, թա՛մ ուզած տէլիխանկըս ես եղեր օրդտի... շատ ապրիս:

Օրիորդը որ թեւը մտած կը յառաջանար, ոտից ցգլուխ կը ցնցուէր, կը կարմրէր, կը ձերմկէր, բայց մութը իր սեւ ծոցին մէջ ոչ ինչ ցոյց կու տար. բայց միւսիւին թեւին տակ, տակաւ հրահրուող օրիորդին բազուկը, յայտ յանդիման ցոյց կուտար թէ՛ բան մը կըլլար ան, բան մը կըզար ու բաներ մը հասկնել կուզէր.

Տասը վայրկեան այսպէս յառաջանալով, կը հասնին տուն, ո՛ւր Յուսէփ աղա, գիշերնոցը հագած դռուը նստած էր՝ սիկառի բերան...

— Աֆէրիմ, աֆ... է... ր... ի...

Ու պիտի շարունակէր խօսքը, երբ ան ծանօթ միւսիւն բաժնուելով օրիորդին թեւէն, օձի մը մը պէս գալարուելով կը բաւելէ ղինք...

— Ասծուբարին ամա, չեմ ճանչնար կոր տղա՛ս...

— Յուսէփ աղա՛, էլի՛ր կայնէ տէ չընորհակալ էղիր միւսիւին քի, մեզի մինչեւ հոս պերաւ ձգեց...

— Շորհակալ եմ ամա՛, միւսիւն չեմ ճանչնար կոր...

— Զուլթուլթմազ... պատիւ է ինձ ներկայանալ ձերդ յարգութեան...

— Համմէ՞... կայնէ նայիմ, սանկ ըջըխին եկուր, աս տեղը պան մը կայ ամա՞...

— Ճանըմ չեա հասկնար կոր, միւսիւն տեսնալով քի մինակ էնք, առաւ մինչեւ հոս պերաւ քի...

— Ուրեմն ինձ ներողութիւն տիկին...

— Չէ՛... ըռախի մը մինչեւ քի ծառքով լըս չիտամ նէ չեմ ձգէր ըսելով, արդէն պատրաստ քեփսին մէջտեղ կուգայ ու ոտքի վրայ դաւաթիկը լեցնելով. առ աղջիկս, ծառքովդ քալալիեռիդ ըռախի մը տուր...

— Մէռսի մատմաղէլ, շատ աղնիւ էք...

— Մէկ հատ մըն ալ իմ խաթերս համար...

— Ա՛խ, շատ շնորհակալ եմ... բայց...

— Է՛յ աղային կենացը չեա խմէր...

— Մէռսի, տրդէն ատենը ուշ է...

— Աղէկ ամա աս մէկ հատն ալ աղջըկանս կենացը... հէ՛...

— Ա՛... կարելի՞ է մերթել...

— Սա ալ իմ կենացս... նայէ ես ալ պաս պարապար կը խմեմ կոր: ախ միւսիւ քենէ բէք հազ ըրի...

— Նոյնպէս եւ ես տիկին, կարծեմ թէ վաղն ալ հոս պիտի ըլլամ, կը տեսնուինք օ ռըվուառ...

— Կայնէ, չի կացած սա ալ խմէ տէ տանկ պարէ եղաւ ըլլալիք...


Միւսին, քիթին ծալքը չտեսնալու աստիճան արքեալ վիճակը մէջ կը մտնի, մինչ Յուսէփ աղա աթոռին վրայ ծալուած՝ խօսք կ'առնէ.

— Ի՞նչ խէրթիպ է աս Մարիցա՞յ, քիւլա՛նը անցունեմ կըսես...

— Սո՛ւս, դուն ամէն պանին սօնը նայէ, ես գիտեմ կոր ըրածս թողածս, աս տղան փեսայ պիտի ընեմ Յուսէփ... խելքդ կը խըդ ժողվէ...

— Մարիցա՛, քանի՞ խառէխ եղաւ, ինծի կուգայ քի վեցինճին ես, չիւնքիւ Յուսէփը հինկինճին, աղան՝ վեցինճին մէջը մնաց...

— ՄՖ... կուպէկոր ելաք... դուն վաղը իրինկուն ինծի Բաղար պաշին սէյիր ըրէ, նայէ քի Մարիցան ի՞նչ պիտի ընէ՛ և զոր մէնք ալ պատիւ պիտի ունենանք նկարագրելու յաջորդ թիւով:



Ուր Ամբակում՝ կ'առակե
Անմեռուկը եւ յետոյ բա-
նեւ մը կըսէ իր ընթեր-
ցողներուն...

Փոխանակ խօսքերս սղտղերեւո՛ւ՝ ելեր գա-
ցեր ու «ինչպէս կին կուզեմ որ...ամուս-
նանամ»ը կը գրես...

Մե՛ղք, այ քան խրատներու՝ որ գլխուդ
կարգացեր էի՝ օգը ցնդեր են և դուն ալ կե-
ցեր...ետեւնուն կը նայիս...

Չորս հինգ շաբաթ է որ մէջտեղը չիգաս,
խօսքեր ունիմ զուրցելիք և մարդ չկայ որ
սղագրէ, ու դուն անդէն, կեցեր ինծի հա-
սակ կը ցուցունես...հասակդ իմինէս մէկ
մատ կարճ ըլլալով հանդերձ...

Ա՛լ եկած հասած է ժամանակը ապաշխա-
րելու:

Սա՛ գրիչդ ձեռք առ նայիմ և ինծի մը-
տիկ ըրէ...

Որովհետեւ Հանրագիտակի սիրելի ընթեր-
ցողները Ամբակումիս խօսքերուն կապասեն...

Եւ քանի որ կ'սպասեն՝ ես ալ պէտք է
խօսիմ...

* * *

Մատակարարի մէջ ամուսնութիւն մը
կատարուեր է... պայմանագրութեամբ:

Համմէ՛...

Այո՛, պայմանագրութիւն մը կնքուեր է,
տասնըհինգ տարուան համար:

Թօհաֆ բան...

Տասնըհինգ տարուան մէջ, եթէ իրարմէ
դժգոհալու պատճառ մը ունենան, պիտի կը-
նան եղէրը ուժնուի... առանց ամուսնալուծ-
ման:

Շատ ծիծաղելի...

Տասնը հինգ տարուան մէջ, առ առա-
ւելն, երեք զաւակ պիտի ունենան, որով-
հետեւ... այդպէս գրուած է պայմանագրու-
թեան մէջ:

Շատ թօհաֆ պարագայ...

Ամուսնացեալներուն ծնողքները, տարին
երկու անգամ պիտի կրնան եղէր տեսնել ի-
րենց հարսը ու փեսան, ան ալ՝ Հոկտեմբեր
և Մայիս ամիսներուն:

Արտակարգ անօրինութիւն...

Առանց կնոջը հաւանութեանը, էրեկը չի
պիտի կրնայ եղեր տունը հիւրեր հրաւիրել:

Ոգելից ըմպելի չպիտի գործածեն փոխա-
դարձաբար:

Եւ տասնը հինգ տարին լրանալուն, եթէ
իրարմէ յափրացած են, պիտի խզեն իրենց
մէջ եղող Հիմէնեան կապը և եթէ չխզուի...
զմեղիով պիտի խզեն...

* * *

Եթէ այս բանը մեր մէջը պատահէր,
գլխիմէ ամէնքնիս, այդ մարդուն տունին
առջեւէն պիտի անցնէինք, այդ տարօրինակ
էակները տեսնալու որոնք... պայմանագրու-
թեամբ ամուսնութիւն կը կնքեն...

Ասկէ հազար տարի վերջը, ատանկ բան
մը մեր մէջ ալ պատահի թերեւս:

Չոր օրինակ, Հոռոփի մը ելլայ և Ամբա-
կումի մը հետ ամուսնանալ ուզէ... պայմա-
նագրութեամբ...

Բայց ի՞նչպէս պիտի խմբագրուի պայմա-
նագրութիւնը:

Ե՛ս, ձեր սիրելի Ամբակումը կը գուշա-
կեմ, և մէկ օրինակ մը ձեր առջեւ կը դը-
նեմ: Ատ պայմանագրութիւնը սա՛նկ պիտի
խմբագրուի:

«Մէկ կողմէն Տիկին Հոռոփի և միւս
կողմէ Տիար Ամբակումի միջեւ, հետեւեալ
պայմանագրութիւնը կնքուած է... կընքա-
մով որ... Խորասանճեան թղթավաճառա-
տունէն գնուած է...»

1. — Ամբակում, առանց կնոջը հաւա-
նութեանը ուզած մարդը չպիտի բերէ տուն,
հապա... իր կնոջ ցուցուցածը:

2. — Տիկին Հոռոփի ուզած մարդը պի-
տի կրնայ տունէն ներս մտնել և դուրս ել-
լիզ պատահանէն... Տիար Ամբակումի քե-
մէյովը...

3. — Տասնը հինգ տարուան մէջ, երկու,
առ առաւելն երեք զաւակ պիտի պարգեւէ

Տիկին Հռոմփիկ իր ամուսինին, սակայն այն պայմանաւ որ ծնածնեւրը՝ կամ իրեն նմանին և կամ պարոնին, ուրիշի մը նմանողը... անընդունելի է և կրնայ պայմանագրութիւնը... մէջտեղ հանել տալ...:

4. — Ոգելից ըմպելի չպիտի գործածուի երկու կողմէն ալ. որովհետեւ մարդս կը գինովցնէ և կարելի է որ երեք զաւակը...:

5. — Եթէ Տիկինը մեղանչէ այս պայմանագրութեան դէմ, Տիար Ամբակում պիտի կրնայ Տիկինին թեւէն բռնելով դռնէն դուրս նետել... և ուրիշ մը ներս առնել, և նորէն, եթէ Պարոն Ամբակումն է որ մեղանչած է, Տիկինը իրաւունք պիտի ունենայ, փափուկ աքացի մը զարնել Տիար Ամբակումի հակափորին և դուրս նետել պատուհանէն... զըռնէն ուրիշ մարդուկ մը ներս առնելու համար:

6. — Աս պայմանագրութիւնն ստանձնինգ տարուան ուժ ունի և լրանալուն՝ երկու կողմի հաւանութեամբ կրնայ նորոգուիլ),

Համմէ՛... ի՞նչ ըսիք... աղէկ չէ՞...:

×

Քանի մը բառեր
Խօսքեր հին ու մին
Մեր Անբակումին
Միտքն են պղտորէր...

— Կինը ի՞նչ է Ամբակում, նայիմ կրնաս պատասխանել:

— Հը՛, կինը... կին է, բայց մարդոց կուռքն է կրնամ ըսել, այնքան կը պաշտուի որ...:

— Որքեւայրի կինը ի՞նչ է Ամբակում շատ ատեն:

— Չի գիտնայի՛ր «Վարձու բնակարան»:

— Ամբակում հորիզոնական կինը ի՞նչ է:

— Միս ծախող...:

— Տեֆօլքէն ի՞նչ է Ամբակում և ի՞նչ ըսել կուզէ:

— Տեֆօլքէ ըսածիդ պէս սիրտս գէշ եղաւ... բայց կը պատասխանեմ խաբրք չի կոտորելու համար. տեֆօլքէն ա՛յն է էրիկմարդոց համար՝ ինչ որ է քիւլի մը մէջ փաթթուած թոքը՝ կատուներուն...: Երկրորդս ըսել կուզէ. «Կը տեսնաք կոր ես՝, միսս գոյնը կեղծ չէ...»:

— Ամուլ կին ըսելով ինչ պիտի հասկընանք, հաւատարիմ բարեկամս Ամբակում:

— Ամուլ կինը արտի մը կը նմանի, ուր կը ցանես... բայց... չես կրնար հնձել, հողը բերրի չէ... թերեւս...:

— Թերեւս, ըսէ՛, խօսէ՛ Ամբակում:

— Թերեւս վարպետ պարտիզպան մը այդ հողին վրայ աշխատելով բերրի ընէ...:

— Մարապետը ի՞նչ է:

— Պահք բռնող... բայց պահքերնին ուտողներ շատ կը գտնուի միջերնին. նաեւ կրնանք ըսել. անթրէ ենթրսի պիտակը կրող կին...:

— Տգէտ մարդը ի՞նչ է Ամբակում:

— Մարդոց ախլաս արմուսից...:

— Ամուսնութիւնը ինչի կը նմանի շատ ատեն:

— Երգի մը որ եռածայն կ'երգուի. կիւնը՝ բռիմօ, էրիկը՝ սրկօնօ, և բացէն մարդուն մէկն ալ պասօ. և մարդիք ալ կարելի է խառնուիլ անոնց մեներգներ գեղեցիկու:

— Մլուկը ի՞նչ է Ամբակում:

— Միջատներուն ճամպազը. քիչ մը կիւնեւր կը նմանի չարածէին, բռնել կուզես բայց կը փախի...:

— Ներքէ համարձակութեանս Ամբակում, անկողինը ի՞նչ է:

— Անկողինը, հը՛, կեանքի ճամբորդութեան միակ կառքը, որուն մէջ պարտին էրիկ ու կինիկ նստիլ. բայց, մարդեր ալ կը գտնուին շատ ատեն, որոնք՝ այդ կառքին տիկնիկն կը կախուին... անամօթաբար...:

— Պապա Ամբակում, շատակեր որո՞ւ կ'ըսեն:

— Ներսիսի աւելորդ ստամոքս ունեցող մարդուն:

— Զաւակը ի՞նչ է Ամբակում:

— Շատ ատեն կինը զսպելու հարկադրող էակ մը. ահա ինչո՞ւ անգաւակ կիները շատ ատեն չեն զսպուիր...:

— Վարդապետը ի՞նչ է Ամբակում:

— Մէկը որուն փորը կուշտ՝ կռնակը տաք է. ատեն ատեն, գրպանուն դուրս պոռթկացող գոյնզգոյն տպեալ թուղթեր մը կը նշմարեմ, սակայն չեմ գիտեր թէ... արժէքաւոր են թէ ոչ...:

— Իսկ քահանան:

— Հրեշտակապետին խառ օրբախը, ըստ վկայութեան Ամբակումի...:

— Ամբակումը ո՞վ է Ամբակում...:

— Սուտ խենդ եղած աքաղաղ՝ որ հաւերուն ետեւէն կը վազէ... ըստ վկայութեան՝

ԱՆՄԵՌՈՒԿԻ

Արսօնաք ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՅՊԱԳՐ. Ե. ՍՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի ճասէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

Արսնց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԵՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հատան, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիններէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գինեւրու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղաւորներու
եւ տղայոց շէք եւ դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ միջերը մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրջ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50-47



ԱՌԻԹԵՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՊՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեպոյ պէյ խանին
սակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Զինասանէ, Հնդկասանէ, Ճալատ եւ Ճա-
թոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտաւորին:

ԿՈՒՁԷՔ ՍՏԱՆԱԼ ԶԵՐ ՈՒԶԱԾԸ ՓՈՍՏԻՆ ԴԱՐՁՈՎ ՈՒ ԱՆՄԵԱԼ

ՕՐԷՐ ԿԸ ՄՕՏԵՆԱԸ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՈՐ ՇՐՋԱՆԸ

ԻՆՉ ԲԱՆԻ ԿՐՆԱՔ ՊԷՏՔ ՈՒՆԵՆԱԼ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒ՝ ՈՐՈՖ ՎԱՆԵՐԱԳՈՐԱԾ
ԸՍՏԱՆ ՊԱՏ. ՈՒՄՈՒ՝ ԽՈՐՈՖԷՐԷ:

ՏՆՕՐԷՆ, ԴԱՍՏԱՊԱՐԱԿ, ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ՝ ՈՐՈՖ ԸՍՏԱՆ
ՎԿԱՅԵԱԼ, ԿԱՐԿԵՏ ՈՒ ՓՈՐՁԱՌԱՌ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԶԵՌԱԳՈՐԾԻ ՈՒ ԳԾԱԳՈՐԾԵԱՆ ՆԻԻՔԵՐՈՒ՝
ՈՐՈՖ ԳՆՈՎ ԱԾԱՆ ԸՍՏԱՆ ԵՒ ՏԵՍԿԻՊ ԽԱՎՈՐԻՆ:

ՏՂՈՑ ՆՈՒԷՐԻ ՇԱՄԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻՔԵՐՈՒ՝ ՔՈՒՅՔ, ԳՐԻՅ, ՎԵԼԱՆ,
ԿԱՊԱՐԱՐ, ՄԱՏԻՏ, ԲԱՆԱԿ, ՏԵՏՐԱԿ, ԲԱՐԻՅ, ԲԱՐՏԱԽԱՍԱԿ,
ԿԱԽԻՆ, ԳԾԱԳՐՈՒՄԱՆ ԳԱՆԱԳԱՆ ՆԵՐԿԵՐ ԵՆԻ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒԷՐ Ե ԳՈՐԾ՝ ԵՐ. ՎԿԱՅԱԿԱՆ, ՎԻՃԱԿԱՅՈՅ, ԲԱ-
ՐԵՆԻՔ, ԿԱՏՈՒԱՆԻՔ, ԿԱՅԱԲԱՐՏ, ԵՐԿԱՅԵԱԿԱՆ, ԿԱՆԱԿԱՅՈՒԽ
ԿԱՆԱՐԱՆ ԵՆԻ: Իճ՝ ՈՐ ԱՂ ԸՍՏԱՆ ԿԱՅԱՆ ԴԵՐ ՎԷՏԻՐ, ԿԱՅԻԳԷՐ
ԱՆԳԱՄ ՄԵ ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ԵՍԿԻԵԱՆ ԳՐԱՍԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ
ՎԱՏԱՆ ԸՍՏԱՆՈՎ ՔԷ՝ ԽԱՐԱԾ ԿԱՅԻՔ ԸՍՏԱՆ, ԲԱՆԻ ՈՐ ՆՈՐ ԵՐԿԱՆԻ
ԱՌՔԻՍ ԱՄԷՆ ԿԱՅԻՔԱՆՆԵՐԱՆ ԿԱՍԱԳՐԵՐԵՆ ԿԱՆ ՈՒ ՆՈՒՍ ՎԵՐԻՐ
ՄԵ ԱՆԵՂՈՒԱԾ Ե ԱՐԴԷՆ՝ ԵՂԱԾ ՏԵՍԿԱՆՆԵՐԱՆ ՎՐԱՅ. ԻճԿԱԿԱՆ
ԴԵՆԱԳՈՐԾԻ ՄԱՆԿԱՅԱՐՏԵԶԻՆ ՈՒ ՏՈՅՈՒՆԻ ԿԱՆԱՐ ԱՌԱՏ ՆԻՔ:

Հարցուցէ՛ք՝ ու անկէջայէս պիտի պատասխանուի
ապապեցե՛ք՝ ու պիտի ստանա՛ք զոր օրին

ԼԱԻԱԳՈՅՆ ԳԻՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԶԵՂՁՈՎ

ԿԱՆԻՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ

ԴԻՄԵՑԷՔ Կ. ՊՈՒՍ ԽՈՐԱՍԱՆԵԱՆ ԽԱՆ ՕԶԱՆՆԵՍ ԷՍԿԻԵԱՆ ԳՐԱՍԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Վ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ

15000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, եայլն. նաեւ անուէններու սկզբնատառով, գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջազգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (Ճօնս. Նովման) եայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և ըն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանաջ տոկունութիւնը, նրբութիւնը և աժա՛նութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—36



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական:

— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Զեւքէ վաճառում՝ տասը փառա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին մէջ, որ աւուր տեղի հրապուրիչ դառնայով՝ նորանոր բարեփոխման երու շնորհիւ զօրս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի զրական, բանասիրական չորուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնօթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն: